ԹԻՎ 11 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ -2 Ա

«23»դեկտեմբեր 2024թ.
ք.Մասիս

ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ (ՄԱՆԴԱՏԻՑ ՀՐԱԺԱՐՎԱԾ) ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած Արարատ մարզի Մասիս համայնքի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկված ավագանու անդամների թեկնածուների կողմից թիվ 11 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված ինքնաբացարկի և մանդատից հրաժարվելու մասին դիմումները՝ թիվ 11 ընտրատածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Ուժը կորցրած ճանաչել

1) «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու՝ Մկրտիչ Ազատյանի գրանցումը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ԹԻՎ 11ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Հ.ՈՒՐՖԱԼՅԱՆ

ԸԸՀ N11